

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբար զբաղւելով զինում են ուղղակի
Тифлисе. Редакция „Маяк“

ՄԱՅԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լինով:

Յայտարարութիւններ համար վճարվում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Քաղաքական վերջին անցքերը: — Ներքին
տեսուչներ: Նամակ Նոյսուց: Նամակ Հո-
սոմսի մեծատնային: Ներքին լուրեր: — Ար-
տաքին տեսուչներ: Անգլիա: Նամակ
Պարսկաստանից: — Մշակիչ հեռագիրներ: — Յայտա-
րարութիւններ: — Տեղեկացոյց: — Բան ասիւրա-
կան: Նախկին կայ մեր և հաճկաստանի հայերի
մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՏՔԵՐԻ

Արեւելեան Բուսնիայից վատ
լուրեր են գալիս: Այդ լուրերից
և ակնհայտ է, որ Արեւե-
լեան Բուսնիայի կառավարիչ իշ-
խան Ալեքսանդր Բազորովի չու-
նի այնքան եռանդ, որ կարողա-
նայ կառավարել այդ երկիրը, որի
գործերը չափազանց խառնված են:
Իշխան Ալեքսանդր Բազորովի
չունի մի քաղաքական մի որոշ
նախագիծ, որը նրան անհրաժեշտ
է Արեւելեան Բուսնիայի նման մի
երկիր կառավարելու համար, որ
բնակեցրած է զանազան միմեանց
հաճատող տարրերով: Կառավա-
րիչ օրից օր կորցնում է իր հե-
ղինակութիւնը Արեւելեան Բուսնի-
լեան բնակեցնող ժողովուրդի ա-
ռաջ: Տեղական զորքերի մէջ կար-
գադահութիւնը հետզհետեւ թու-
լանում է, ժողովուրդը չէ հաւա-
տում իր կառավարչին, որը չա-
փազանց շատ զինուորներ է անում

Բ. Դրանք և որը անդադար
պաշտում է հրաժարել իր պաշ-
տոնից: Այդպիսի դրութեան հե-
տեանքը այն կը լինի, որ անբա-
ւականութիւն կը ծագի Արեւե-
լեան Բուսնիայի բոլոր, թիւրք
և բուսնիոտ ազգաբնակիչութիւն-
ների մէջ: Այդ հանգամանքը ի
նկատի ունենալով թիւրքաց կա-
ռավարութիւնը բազմաթիւ զոր-
քեր է հաւաքում Բուսնիայի սահ-
մանների մօտ:

Ռուս լրագիրները քննելով Ա-
րեւելեան Բուսնիայի այս դրու-
թիւնը այն միտքն են յայտնում,
որ թէպէտ ուստաց զորքերը ար-
դէն հեռացան Բալկանեան թե-
րակցուց, բայց այդ հանգամանքը
չի արգելի Ռուսաստանին խառն-
վել Բուսնիայի գործերի մէջ, եթէ
որ Բ. Դուռը կամենայ փոփո-
խել Բերլինի դաշնագրի այն կէ-
տերը, որոնք վերաբերում են Ա-
րեւելեան Բուսնիային: «Ռուսաս-
տանը, ասում են այդ լրագիրները,
Սան-Ստեֆանոյի դաշնագրի հա-
մեմատ կամենում էր միացեալ
բոլորարական իշխանութիւն հա-
տատել: Ռուս լրագիրները համա-
ձայնելով փոփոխել Սան-Ստեֆա-
նոյի դաշնագիրը և ստորագրելով
Բերլինի դաշնագիրը չափազանց
շատ զինուորներ արին, որպէս զի
կարողանան եւրոպական խաղա-
ղութիւնը պահպանել: Եթէ մի

որ և է պատճառից ստիպված
հարկաւոր կը լինի փոփոխել Բու-
սնիայի դրութիւնը, Ռուսաստանը
անպատճառ գործի մէջ կը խառ-
նվի և կը պաշտպանի իր իրա-
ւունքները:

Մի բանի ժամանակ առաջ գը-
րեթէ բոլոր լրագիրները այն կար-
ծիք էին յայտնում, որ խէյրեզին-
փաշայի հրաժարականը անպատ-
ճառ աղմուկ կը բարձրացնի ան-
դիական թէ լրագիրների մէջ և
թէ քաղաքական շղթաների մէջ:
Այդ գուշակութիւնները անհիմն
եղան. անդիական լրագրութիւնը,
մանաւանդ պաշտօնական լրագիր-
ները բոլորովին ստունարտու-
թեամբ նայեցին գործին: Նորա
այն կարծիքը յայտնեցին, որ խէյ-
րեզինփաշա իր պահանջներով
կամենում էր զրկել սուլթանին իր
իրաւունքներից և բոլորովին են-
թարկել մեծ վեզիրի ազդեցու-
թեանը:

Նշողական լրագիրները ասում
են, որ խէյրեզինփաշա բոլոր-
ովին անձանթ էր այն շղթանի
հետ, որտեղ նա պէտք է գործէր,
որ նախկին մեծ վեզիրը կամե-
նում էր թիւրքիստ սահմանադրա-
կան մի պետութիւն դարձնել որ
անկարելի է դնել այժմ:

Նշողական լրագիրները ասում
են, որ խէյրեզինփաշա բոլոր-
ովին անձանթ էր այն շղթանի
հետ, որտեղ նա պէտք է գործէր,
որ նախկին մեծ վեզիրը կամե-
նում էր թիւրքիստ սահմանադրա-
կան մի պետութիւն դարձնել որ
անկարելի է դնել այժմ:

Մեր բաւական հեռացանք հարցից, երկար
կանգնելով կրօնափոխութեան խնդրի վրա: Յոյս
տալով, թէ մեր և տաճկաստանացի մէջ ոչինչ կա-
պեր կամ յարաբերութիւններ չը կան, և յայտնելով
այն միտքը, թէ մենք պարտաւոր ենք օգնել նրանց,
— դուք ընթերցողը սպասում էր, թէ մենք պէտք
է ցոյց տանք որ և ինչ նոր կապեր կամ մենք
կատենք, թէ ինչով և ինչ բանի մէջ կարող էինք
օգնել նրանց: Գրանց և ոչ մէկը մեր յօդուածի
նպատակը չէ: Մենք պէտք է հետեւենք հմուտ բը-
ժիկի եղանակին, որ առաջ հետազոտում է հիւան-
դի կազմուածքը, ուսումնասիրում է նրա ամբողջ
կենսոյը, քննում է նրա ցանկերը, հասկանում է ցա-
ւերի առաջ ընկող պատճառները, իսկ յետոյ մը-
տածում է դարմանների մասին: Մենք, որպէս բա-
կորում յայտնեցինք, դեռ ոչ բոլորովին ճանաչում
ենք մեր տաճկաստանացի եղբայրներին, չը գիտենք
ինչ բանի կարօտ են նրանք, և նրանց դրութիւնը
իր բոլոր կողմերով գեւ մեզ յայտնի չէ, ուրեմն
ինչ որ գրենք, ինչ որ մտածենք նրանց մասին, բո-
լոր կը լինեն թիւրք, միակողմանի և շատ անպատ-
անհիմն ենթադրութիւններ: Պէտք է ունենալ ծիշ-
տեղեկութիւններ: Պէտք է մեզ հիմնով խնդրի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԹՈՒՑ

19 յուլիսի

Արդէն «Մշակին» ընթերցողներին յայտնի է, որ
այս տարի Նոյսուց 30-ի չափ հայաբեր գիւղերի
դաշտերը փայտան միջերկրի և թէ մուկ—հալածող
հաշակուոր փրկի փայտը անգոր գտնվեցաւ որանց
հալածուր: Այժմ այդ 30-ի չափ գիւղերում գիւ-
ղացիք մնացել են չափազանց, չեն փառանաւում
միւս տարվայ համար աշանս ցանքի նախապատ-
րաստական պարագմունքը սկսել, երկիրը կրկնով
թէ մի գուցէ ցանելու սկսին: Ել նորից կերակուր
զաւաճայ նրանց: Բայց այդ գիւղացիք այժմ սիրա-
չեն առնում իրանց անցեալ տարիներից մնացած
ցորեններից ծախելու և դրա հետեանքը լինում է
այն, որ այսօր Նոյսուց տասնի թմադրութիւն է
սիրում: Յորեն չանաղը (3 փ. 10 ֆ.) որ ան-
ցեալ տարի 2 ռուբլով ծախելով գիւղացին գոհ
էր, այսօր նայն գիւղացին չանաղը 6 ռուբլով հա-
զու է տալիս: Միւս հայաբերներն էլ նոյնպէս մե-
կին երեք թմաղ գնով են ծախելու:

Քաղաքի մեծամասնութիւն կազմող մարդ դա-
տակարը մեծ ներուժի ընդունում է այժմ իր
սպորտի հողաւոր համար: Հաստատու աղբիւրն
րից լավում է, որ շատ գիւղերում այժմ մարդիկ
կան, որոնք 200—300 մինչև իսկ 500 թաղար
(մեց չանաղ, մօտ 20 փ.) ցորեն առնեն, կամ եր-
կուրից և կամ մեծամեծ օգուտներ: Նախապէս ա-
զատութեանց դեռ չեն ծախում:

Չը կան և այնպիսիք որ այս հանգամանքից
չանկնով աշխատում էին որպէս հարաւոր է թե
թեւանելու խեղճ ժողովուրդի միջակը: Այն մի քա-
նիներն վրա էլ, որոնց մնում է այդ պարտականու-
թիւնը, նրանք էլ ապահոված լինելով բնաւ ոչ թէ
չեն մտածում այս մասին, այլ և գուցէ աղբիւրն
էլ են, որ էլ աւելի թմաղանայ, որպէս զի իրանց
աւելի ունեցածներն էլ աւել գնով ծախել կարո-
ղանային: Իսկ խեղճ ժողովուրդը այդ բեզբիկ վրա
է գրել իր յոյսը, այս թմաղութեան առաջն առնելու
համար դրանցից է օգնութիւն սպասում, չլսեմա-
րով որ նրանց փորը կուշտ է, թէ քաղցած լինը
է և էլ ինքը պիտի մնայ: Նրանք լսո մէկի տեղ
յիտենք ունեն, թող մենք աղքատը:

Նույնպէս մի թշուառութիւն էլ այն է, որ

բարձր նշանակութեան վրա և հասկանալ, որպէս
հարկ է, նրանց պէտքերը, և ուսումնասիրել նը-
րանց կենսոյը և կացութեան բոլոր էական գծերը,
նրանց տնտեսական վիճակը, անցեալ և ներկայ
քաղաքական դրութիւնը և այլն: Բաւական չեն
միայն եղբայրական զգացմունքները արտայայտու-
թիւնները կամ ազգայնական դարձակ ցուցում-
ներ, որ վերջանում են նրանով միայն, որ ողոր-
միւր տաճկաստանացու համար օգնելն ամբողջ
ենք ստեղծում, մինչդեռ նա իր գլուխը դնելու և
հանգչելու տեղ չունի:

Մեր մէջ պէտք է կազմի փոխադարձ հասկացո-
ղութիւն: Մենք դեռ չունենք ոչ մի օրինակող չարա-
գրութիւն տաճկական Հայաստանի մասին: Մի քանի
հատուկատու, չնչին, անիմաստ յօդուածներն ինչ լոյս
կարող էին ձգել նրանց կենսոյը վրա: Մեզ պէտք են
կատարեալ ժողովրդագրական (էտնոգրաֆիական)
տեղեկութիւններ, հիմնված հաստատ փաստերի
վրա, ոչ միայն հայերի կենսոյը ուսումնասիրելու
համար, այլև թիւրքերի, քուրդերի, չէքեզների և
բոլոր ցեղերի, որ այժմ Հայաստանում բնակվում
են: Մեզ պէտք են կատարեալ աշխարհագրական
տեղեկութիւններ, Հայաստանի ազգայնականութեան,
արդիւնաբերութեան, տեղադրութեան, ճանապարհ-
հանգի հարաբերակցութեան և նրա թէ բնական և թէ
քաղաքական կենսոյը մասին: Մեզ պէտք են ծիշ-
վիճակագրական և անտեսադրական տեղեկութիւն-
ներ հայոց ազգաբնակչութեան մասին առանձա-
պէս և օտար ցեղերի մասին ընդհանրապէս: Մեզ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ
ԱՆՏՔԵՐԻ

Եւ թիւրքիայի պետական մարդիկը շատ լաւ են
հասկացել վերջինիս հանգամանքները, քաղաքական,
զի տիրեցեան—առա նրանց զէնքը: Մեզանց ա-
մեն մէկը առհասարակ խիստ արհամարհական
կարծիք ունի թիւրքիայի պետական մարդերի վրա:
Նրանք թէ են հանձարներ չեն, նրանք թէ են մի-մի
երեւել աւագաններ են, որ կողպատում են ար-
քունի գանձը, և ամբողջ նահանգների ժողովուրդը
վերջին թշուառութեան մէջ են ձգում, — բայց խո-
րամանկութեան մէջ, դիւանագիտական խաբէյու-
թեան մէջ և ընդհանրապէս մակկիւղիւղով մէջ
անհամեմատ չարախի են: Նրանք չափ լաւ են
հասկանում պետութեան մէջ եղող բոլոր ցեղերի
յարաբերութիւնները, նրանց ձգտումները, և եթէ
Քաղաքականութեան մի փոքրիկ նշույլ են տեսնում,
զիտեն, թէ ինչ եղանակով պէտք էր կամ յարմար
էր խեղդել նրանց ձգտումները, կամ բոլորովին

ոչինչանել: Նրանք չեն արհամարհում օգուտ քա-
ղի և ամենապարզ միջոցներից, որոնցով կարելի
էր մի ցեղի մէջ երկպառակութիւն ձգել և նրա
միութեան կապերը քանդել: Նրանք վարուց են
հասկացել, թէ ինչ միջոցով կարելի է քաղաքի
հայ ժողովուրդի ամբողջութիւնը, որ լուսաւորական
եկեղեցուց դուրս հայ չէ ճանաչում, եւ այդ է
պատճառը, որ թիւրքիայում կրօնափոխութիւնը
այնպէս արագ քաղցրելով առաջ է գնում, որպէս
կառավարութիւնը ինքը նպատակ է: Այս բոլորից
յիտող զարմանալի չէ տեսնել, որ հայկական խըն-
դրին կից յարուցվեցաւ հաստեանների և հակա-
հաստեանների դադարած կոչը:

Երօտական երկպառակութիւններն ուս տար և
նրանց միջոցով զանազան ցեղերի մէջ անմիաբա-
նութիւն և անհաշտութիւն պահպանելը — դա մի
ժառանգական քաղաքագիտութիւն է, որ սկիսա-
կանից է իրան մեծօրակաւ թիւրքեան իրաւա-
գիտի գահին հետ: Միայն հայերի վերաբերութեանը
չէ վարվում նա այդպէս. նայն երեւոյթները կրկն-
վում են նեոտորական և նեոտորականութիւնից
բաժանված ասորիների մէջ, քիլիկիների մէջ, մա-
րոնիների մէջ, եսկիւրիների մէջ, զլայների մէջ,
և առհասարակ բոլոր քրիստոնէայի ցեղերի մէջ:
Ո՞վ չը գիտէ, թէ ամեն տարի, աւելի յարուցվեցաւ
տոնի օրը Երուսաղէմում, սուրբ Զատիկայ տօնարի
մէջ ինչ խաղաղական խռովութիւններ են պատա-
հում հայոց, լատինական և յայն արեղանների մէջ:
Եւ չը նայելով հայոց և յունաց պատերազմարան-

թող չէ տրված Գրաքննչի և Շահմանի կողմերից ցորեն ներս բերելու, քանի որ Նույնպէս տանելու իրաւունքը նահանգապետի հրամանով ամեն մէկ շարքի ունեցել է և ունի մինչև այսօր:

Արդիւն ժամանակներս Նույնպէս մի տեսակ հիւանդութիւն կայ կենդանիների մէջ: Կենդանին (կովը կամ գոմէշը) սկզբում սկսում է չոր հագել, ստների սրունքների վրա գտնվող մաշկը ցլից ցլից կանգնում են, կենդանին զուրկ քաշ է ձգում և ոտները իրար մօտեցնելով ամբողջ մարմնով կուշ է դալիս և շատ անգամ չէ քաշում մի շարքով սատկում է:

Մեր վաճառականների բաներն էլ այսօր լաւ չեն գնում: առևտուրի մասին ամենքը գանգատու են: Այժմ, առևտուրի այս լաւ ժամանակը օրական մէկ, երկու մուշտարի (գնդ) հազիւ է խանդարում նրանց անգործութիւնից յառաջացած նինջը: Գայտի է որ լեռնախանները (խզղիները) այս ամառվայ երկու երեք ամիսներում են բերում իրանց չալերը ծախելու, և այստեղից իրանց հարկաւոր պիտոյքը գնելու: Այս երեք ամիսներում, որ պիտի եռ դար առևտուրը, ընդհանրապէս մեծ ստուգութիւն է նկատվում, որովհետև այսօր շատերը այդ լեռնախաններից բերում են չալերը ծախում են և այդ ստացած փողերով Գարբանդից, Շուրպից և այլ իրանց մօտ քաղաքներից են գնում իրանց պիտոյքը: Ճանապարհների դժուարութիւնները, լեռնախանների աշխատանքները և վաճառականների յայտնի խաբէյութիւնը վերջին այս փոփոխութեան պակաս պատճառները չեն: Մեր վաճառականների աներն էլ հենց Աստուած այն ժամանակ է քանդում, երբ էլ սրանք չեն կարողանում առաջվան պէս խաբել իրանց մուշտարներին: Շատ են սուտ երդում կերել, թող այս էլ նրանց ապաշխարանք լինի:

Մի այսպիսի անաղղ ժամանակ այցելեց մեզ Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետը: Նույնիս որ մի եկեղեցու կաթողիկէ, կամ մի վանքի չորս պատերում ի զօր ուսող, խմող, միաբանութեան քեֆը քթը անելու համար իւրաքանչիւր իրան դիմող նուիրատուներին հաւաքող վարդապետին 600—800-ներով և մինչև իսկ 1000-ներով է ճանապարհ ձգել, այսօր դէպի Ամբրոսիոսը առատաձեռն չը գտնվեցաւ, միայն 267 ռուբլ կարողացաւ նուիրել: Բայց դեռ Ամբրոսիոսին ամենագործողը չենք անուանել վարդապետների մէջ, մինչև որ չը տեսնենք թէ հայր խորէն Ստեփանն ինչ կը ժողովի, երբ այստեղ էլ կայցելէ:

Մեր հոգեւոր զարդից գործերն էլ այսօր անախանները դուրսեցնում են, հոգաբարձութիւն, ժողովուրդ, ուսուցիչներ, տեսուչ բոլորն էլ գանգատու են միմեանցից: Ժողովուրդը առաւել գանգատու էր և տեսչից—Աւետիս Տէր-Յակոբեանից, և ապա հոգաբարձութենից: Հոգաբարձութիւնը երկու շաբաթից աւել է որ հրաժարեցրել է տեսչին: Գծագրութիւնը շարունակվում է, բայց դա մի ոյժ, մի մարմին չէ կազմում, այլ այս և այն անկիւններում բաժնաւորներ ձևով ցրվում է, առանց խնդիր պարզելու: Որքան իրաւացի և անիրաւացի են հոգաբարձութեան և տեսչի մէջ ծագած դժգոհութիւնը ցանկալի է որ հրապարակաւ խօսվեն: Մենք առաջինը զարդից օգուտը աչքի առաջ ունենալով, քանդում ենք այդ երկար

լուսթիւնը հետեւալ հարցերը առաջարկելով, որոնց մասին ամեն տեղ խօսվում է և ուղիղը չէ խմայելու:

Արդեօք այն ճշմարիտ է, որ Սանատարեանցից զարդից աղքատ աշակերտներին քնծայ ուղարկած դատական առարկաները տեսուչը ծախել է նրանց վրա, գուժարը իրան սեփականացրել:

Իրան է որ տեսուչը իր մասնաւոր մինչև 15 աշակերտների, բէգերի որդիների վրա, 2 կամ 3 ժամ է դործ դրել, իսկ մի և նոյն դատատանը գտնվող մի քանի տանեակ աղքատ աշակերտներին զրկել նոյն չորհրդից:

Ճշմարիտ է, որ տեսուչը մի տարվայ մէջ երկու երեք գիւրք է փոխել տուել աշակերտներին և իւրաքանչիւրը 20, 25 կոպ. և էլ աւելի մեծ աշխատանքներով ծախել:

Նոյնպէս ճշմարիտ է այն, որ տեսուչը աշակերտներից տարեկան վճարը ստանալով, հոգաբարձութիւնը նրանից հաշիւ պահանջելու ժամանակ պատասխանել է, թէ ուսումնարանի իրերի վրա է դործ դրել:

Իրան է այն, որ այս տարի հարցաքննութիւններին 3 կամ 4 աշակերտներ են եղել միայն լաւ պատասխանող:

Կը ցանկանայինք որ այս խոշոր հարցերին պատասխանէին գործին մօտ անձինք:

9.

ՆԱՄԱԿ ՀՈՌՈՄՈՍԻ ՄԵՆԱՍՏԱՆԻՑ

13 յուլիսի

Մեր անբաղդ հայրենեաց սեւաբաղդ Անիի սուրբ յիշատակները մի անգամ էլ ինձ ստիպեցին այցելել այդ տխուր աւերակներին և խորին յարգանքը համբուրել նորանց սուրբ բեկորներին:—Յուլիոսի վերջերում մի խումբ հայ երիտասարդներ Անիի նշանակաւոր աւերակների մէջ վրդովված հոգով երկար չըմազակուց զինք, պղտոր սրտերով դուրս եկանք այդ անմահ սրբապարկից, արտասուքառուն աչքերով համբուրեցինք նրա պաշտելի պարիսպը, կրկին և կրկին ձմեռա բարեհաճ ասելով, ակնախնայ հեռացնէր կրակաբորան աւերակներից:—Այլ օրը մենք մտանք Հոռոմոսի չքնաղ մենաստանը ուղիղ անք ժամանակ, երբ Վարսի առաջնորդը նոր եպիսկոպոս ձեռնադրված, էջմիածնից վերադարձել էր այդ տեղ, սինդի տուած հրահանգի համաձայն այդ վանքի վանահայր Ստեփան վարդապետի գործերը քննելու համար: Վնասութեան ներկայ էին վանքի անհնաւ միաբանութիւնը, մի քանի (անշահաւոր) հոգեւորականներ, պատուաւոր իշխաններ, և այլք: Մի քանի խօսք յառաջանելուց զինք, գեր. Գրիգորի եպիսկոպոսը քննութիւնը սկսեց վանքի ծախուց գումարից, որի իսկական պատկերը առանց աղաւաղելու հետեւան է:

1. Ստեփան վարդապետը 1878 թուին քննել է երկու հատ երկու տարեկան գումի ձագեր, մինը անեղացի Ոսկանից 16 ռուբլով, միւրը Բաշ-Շուրա գետից իւր խնամի Գուլից 15 ռուբլով: Բայց գումարի 35-երորդ երեսում, փոխանակ 31 ռուբ-

լու, երկուսի գինը նշանակուած էր 56 ռուբլի: Յիշեալ գիւղացիք իրանք անձամբ ներկայացան քննութեան և դէմ յանդիման հաստատեցին թէ ամենք մեր երկու գումի ձագերը 31 ռուբլով ենք ծախել վանքի վրա: Ստեփան վարդապետը այս անակնադիմ վիշաւութիւնը տեսնելով, խապտ պապան ձգեց, կարմրեց, դեղնեց և վերջապէս սեւացաւ:

2. Ստեփան վարդապետը մի հին ինքնաեռի (որ ամենաշատ արժէ 6 ռուբլի) համար նշանակել է 18 ռուբլի 78 թուի ծախուց գումարում: Բայց երբոր միաբանութիւնը և մի քանի տեղացիներ հաստատեցին, որ այդ ինքնաեռը 77 թուից էլ առաջ եղել է, խեղճ վանահայրը դարձաւ լուեց, կապտեց ու սեւացաւ:—

3. Ստեփան վարդապետը կամենալով անմահացնել իր անունը, վանքի շատ վաղուց ունեցած տախտակներից չորսը տալիս է տեղացի անփորձ վարդապետ երկու աշակերտական նստարաններ չի նկատ, որոյ համար ծախս նշանակված էր վաւան շինութեան երկու նստարանի (բայց պէտք է դիտարկել որ դեռ ոչ վարժատուն կայ, ոչ վարժպետ և ոչ աշակերտ, հայր սուրբը նստարաններն է պատրաստում) համար տրվեցաւ ծախս 30 ռ. 40 կ.»: Այս նստարանների սարսափելի թանգ գինը շատ զարմացրեց մեզ. որովհետեւ տախտակը վանքից, միայն չինելու վարձ 30 ռ.—40 կ. կատարեալ բարբառութիւն է: Ամենքի կատարած փարատելու համար, գեր. Գրիգորիս եպիսկոպոսը կանչել տուեց շինող վարդապետին, որ դէմ յանդիման Ստեփան վարդապետի հաստատեց թէ ձեռ ոչ մի կողմէլ փող չեմ աւել և այդ երկու նստարանները բոլորովին ձրի եմ շինել և մի զոյգ գիւղացի էլ հայր սուրբին քնծայ եմ տուել, որովհետեւ դա ինձ խոտաացաւ տանել էջմիածին և քանանայ ձեռնադրել տալ:—

Միծաղն ընկաւ մեր մէջ. բայց Ստեփան հայր սուրբը տեղի ու տեղը չորացաւ, աս... ք... ու... մ... մը... կամենայնք խապտ լուեց ու սեւացաւ:— Է. քանդակագործը Գարուիւն աղայ Գոմանշանեանցից նուէր 25 ռ.»: Մի և նոյն տուժարի 13 երբորդ երեսում Ստեփան վարդապետը գրել է ձիւնալ արեւմտադարացի Գ. Գոմանշանեանցի 25 ռ. նուէրը չը մնաց վանքին, այլ Վարսի առաջնորդ Գրիգորիս վարդապետը տարաւ: Այս բանը շատ վրաւորեց եպիսկոպոսին, որովհետեւ ինչպէս միաբանութիւնը, այնպէս էլ օրինաւոր կարող զըրված մուրհակը վկայեցին որ, Ստեփան վարդապետը 40 ռ. պարտ է եղել եպիսկոպոսին և այդ 25 ռուբլին իր պարտուց փոխարէն տուել է Գրիգորիս եպիսկոպոսին: Բանը պարզվեցաւ: Ստեփան վարդապետը դարձեալ լուեց և իր ձեռքով տուժարի 13 երբոր երեսում իր գրած խաղախնութեան տակ եպիսկոպոսի թղեպարտութեամբ աւելացրեց Գորովհետեւ եւ Գրիգորիս եպիսկոպոսին պարտ եմ 40 ռ., այդ պատճառով յիշեալ Գարուիւն Գոմանշանեանցի 25 ռուբլին իմ պարտուց փոխարէն եմ տուել Գրիգորիս եպիսկոպոսին, ուրեմն եւ դարձեալ 25 ռ. վանքին պարտ կը մնամ: Ստեփան վարդապետ Շիրակեան: Իրրի վկայք բաւարարեցին մի քանի հոգեւորականներ:

5. Մի անգամ Վարսի միջոց զարու համար ծախս նշանակված էր 38 ռուբլի, և էջմիածին գնալ դա-

լու համար կրկնապատիկ աւելի ծախս և չէ նշանակված թէ ինչ բաների վրա է ծախսել: Ժանաւանդ հետը գնացող զարդ գիւղացիները վկայում են որ գեղեցիկ թոթովի հաւի ձուտերը, միւսուները, ձուածեղները, արաղները, ուտելով խմելով, և քէֆ անելով գնացինք էջմիածին եկանք, գեղերի երեցփոխներն էլ առանց աջամբուրի հայր սուրբին դուրս չէին թողնում:—

6. Վանքի միաբանից համար, չիր, բրինձ, չաբար, չալ, ... և այլ այս տեսակ առնուած իրեղէնների համար կրկնապատիկ ծախս է դրած և այն յայտնի չէ, երբ, որ ամսին, քանիսին է առնուած, միայն առատօրէն նշանակված է զարմեալ 4 պուտ բըրինձ, զարմեալ մի գուրս չաբար և 2 գրվաբայ չալ, ևս մի պուտ չիր:— և այլն:— Միտուց տուժարը վերջացնելուց զինք, սկսեցին քրքրել մտից տուժարը, որտեղ ոչինչ չէր մտել բացի մի քանի ուխտաւորների նուէրներից, որոնք իրանց ձեռքով էին գրել, իսկ անգործատ նուիրատուների նուէրները ոչ մի տեղ չէրեցին:— Վանքապատկան կալուածներից, բանջարաններից, կապալով տուած արօտաւորներից, արտերից, հնձաւորներից, բազմաթիւ ուխտաւորների մատաղացու ոչխարներից, ոչինչ, ոչ մի կողմէլ, ոչ մի մուտք տուժարում չէր գրված: Կաթնուղիների կոնդակով Շիրակայ գիւղերը մաշեց և մի քանի հարկւր ռուբլ հաւաքեց, բացի մատաղացու եղներից ու ոչխարներից, դարձեալ ոչ մի կողմէլ ոչ մի տուժարում նշանակված չը կայ: Երբ որ գեր. Գրիգորիս եպիսկոպոսը քաղցրութեամբ հարցնում էր Էջմի սուրբը, ակն այս վանքի եկամուտները, հաւաքածոք փողերը ինչ են աւերք: Կրմ... կու... կալ... կամենացեց, կմկացեց... պատանձեց ու սեւացաւ: ոչ մի սուտ չը կարողացաւ գտնել, որովհետեւ այսօր հայր սուրբի ստուգութեան արարք պարպել էր և ստի ոտները կարճացել:— Չերկարացնենք: վերջապա քննութիւնը, ծախել մտից հետ քաղաքաւորով, դուրս եկաւ բանից որ ամեն քան Ստեփան հայր սուրբը ազգապիտար իր ընդին է միտել և հետեւաբար վանքը իրան մի քանի հարկւր ռ. էլ պարտ է մընում: Որեմն կեցցէ Ստեփան հայր սուրբը իր իգուր ստացած աւանակ ու աւանակ խաչով իր խորին խորամանկութեամբ, իր խարդախ ծախս ու մտից տուժարներով, իր պոչաւոր ստեղծում է իր անամօթ խաբէրացութեամբ, ...— Ստեփան հայր սուրբը զգուրաւ խուփը գտաւ պուտուլը առաջին համաձայն, իրան գաղափարակից, բոլորովին ձրի, մի չաթուքեանան քարտուղար էլ է ձարել, որի մասին մի համառօտ ծանօթութիւն տալ աւելորդ չեմ համարում այդ քարտուղարն է Տաճկաստանից մեր կողմը փախած պ. Արմենակ, որ խաբէրալուսթեան մէջ ոչ ծնվել է և ոչ էլ կարող է ծննվել: Այս թափառական Գ. օն Քիշտը միամիտ զղոյթներին խաբեց, ամենիցն էլ փող ժողովուրդ թէ ձեռ խաղնի տեղ գիտեմ: մէկ ամիս հորջան ցեղի գիւղացիներին չարչարեց, անագին զոր բացարեց և այդ հորի տակից մի ոսկու գտաւ և միամիտ գիւղացիներին հաւատացրեց թէ ճերազուան տեսայ որ այստեղ սուրբ կայ և այս սրբի ոսկուն է, թող չի տալիս որ գանձը հանենք: Միամիտ գիւղացիք փողերու գործիքները սարսափած վայր դրան, և այդ հորը մինչ ցայսօր էլ ուխտատեղի է դառել չըմալայ բնակիչներին համար: Այս խաբէ-

պէտք են մինչև անգամ գիտնալ Հայաստանում բնակվող ժողովուրդների մէջ տարող ոգին, նրանց բնաւորութիւնները, ուղղութիւնը, ձգտումները, կրօնական և բարոյական դրացմունքները, մի խօսքով, նրանց բոլոր մտաւոր և հոգեբանական կողմը: *)

Կ. Պօլսի հայոց մամուլը և նրանց գրականութիւնը չը տուեցին մեզ վերոյիշեալ տեղեկութիւններից և ոչ մէկը, ոչ իրանք ցանկացան ունենալ:— Գրա մէջ պէտք է որոնել նրանց անյաջողութեան ամենամեծ պատճառը: Թիւրքալի գրական մարդիկը այն աստիճան անպարզացած և մանրիկ մարդիկ են (թէ է, պէտք է խոստովանվել, որ մեր մէջ էլ չը կան մեծ մարդիկ) որ մինչև անգամ չէին կարող մտածել, թէ ինչ պէտք է իրանց և ինչ բանի համար պէտք է գրել: Տեղային սահմանափակ միջոցները չը կարողացան ստեղծել զօրաւոր տաղանդներ զօրաւոր գործերի համար, և

*) Որպէս բացատրութիւն, պէտք է յիշել, որ պ. Գ. Ռոմբոնու գրասխնութիւնը «Թիւրքաց հայերի անտեսական դրութիւնը» վերնագրով, որ տրվեցաւ «Մշակ» № 15, 16, 17, 18, թէ իր բացատրութեան բովանդակութեան կողմից, և թէ հայացքների ճշգրտութեան կողմից ներկայացնում է մի գեղեցիկ օտայն թիւրքալի վերաբերեալ մեր դատարկ և անպատասցած գրականութեան մէջ, և ցուում ենք, որ Կ. Պօլսի մամուլը չը հետաքրքրեցաւ իրեալ աշխատութիւնով, և այդ մի տրված նշան պէտք է համարել նրանց անտարբերութեանը դէպի այն բոլորը, ինչ որ իրական կեանքին և բնութեանն է վերաբերում:

մնալով տկար, նրանք չը կարողացան ծառայել աղբային զլխաւոր պահանջներին,—նրա փրկութեանը օտարի ճաշող ներգործութիւնով: Իսկ մեր մէջ թէ է չը կան զօրաւոր տաղանդներ, բայց կան զարգացած մարդիկ, որոնք կարող են աւելի նպատակալարար և հիմնաւոր կերպով գործել, քան թէ Կ. պոլսիցի:

Բայց կան և մարդիկ, որ այսպէս են մտածում: Թողէք տաճկաստանցիներին հանգիստ մնալ, մի պղտորէք նրանց միտքը, նրանք աւելի լաւ են հասկանում իրանց գործը, ամենք մեծ յոյսեր ունենք նրանցից և այլն: Երանի թէ գիտենայինք, ինչ բանի վրա են հիմնված այդ յոյսերը: Այս տեսակ խօսքերով կարելի է ամբողջ գրքեր գրել, միայն թէ ցանկութիւն լինէր անիմաստ բառեր չարել: Եւ զարմանալիս այն է, որ այդ պատճառախօս խոսակցութիւնը համարձակվում են մի ամբողջ ընկած ժողովուրդ գեղեցիկը ապագան նախագուշակելով դատարկ յոյսերով միայն, առանց նրան ճանաչելու, առանց նրա ներկայ դրութիւնը հասկանալու: Գրանք նմանում են այն և դէրա մարք կոչված պատճանքին, որ հրաւիրվում են դիմելու վրա երգ երգելու: Նրանց համար մի և նոյն է, թէ ով էր, ինչ տեսած մարդ էր հանդուրեղալը, կարող են նրան մինչև անգամ չը ճանաչել, կարող է նա բոլորովին ոչինչ մարդ լինել,—բայց նրանք միշտ իրանց սովորական երգն են երգում, գովաւանում են նրա չը գործած սերադործութիւնները, նրա տաւաքնութիւնները, գուլթ և արտասանք են

չարժում, որովհետեւ դրա համար վարձ են ստանում:

Միշտ յոյս և յոյս,—այդ է խոստովանելի խօսքը, թէ է դարձալ յոյսը առանց գործի ոչ մի նպատակի չէ հասցնում: Անշարժութեան այդ վարդապետները, եւ հաւատացած եմ, կը ցանկանային, որ ամբողջ մարդկութիւնը միմիայն լինէին և երբէք չը փոխվէին, փոյթ չէ, եթէ նրանց մէջ կեանք չէր լինի:

Ոչ, մենք պէտք է խօսենք, պէտք է մտածենք մեր տաճկաստանցի եղբայրների մասին. պէտք է քննենք նրանց և բոլորը կրիտիկական խոստովանութեանը քննենք: Փանի բը կատարեալապէս չենք ուսումնասիրել, քանի որ չունենք և չենք աշխատի ունենալ նրանց դրութեան մասին ճիշդ և մանրամասն տեղեկութիւններ,—մեր բոլոր ջանքը, մեր բոլոր աշխատութիւնը նրանց օգնելու մասին ապարդիւն կը լինի: Կանգնել հեռու, չը մտնել գործի մէջ, չը տեղեկանալ մի ժողովուրդ իրական պահանջները և միայն ստեղծել իր զլխում իղէպական ցնորքներ,—այդ բոլորը հրապուրիչ բաներ են, բայց խաբուսիկ են: Կարելի տր երեսկալուսթեանը ինչն իրան ոչնչանում են, երբ զարկվում են իրականութեան հետ:

Կրկնում ենք, մեր և մեր տաճկաստանցի եղբայրների մէջ մինչև այսօր ոչ մի ամուր կապ չէ եղել և չը կայ: Պատճառները բացատրեցինք: Եւ այն ժամանակ կը կազմվի մեր մէջ փոխադարձ յարաբերութեան կապ, երբ կը լինի մտքի փոխա-

(Կը չարունակվի)

բան մի տարի էլ Բաշ-Դորապետում վարժարանում
թիւն արեց, յետոյ սկսեց թափառել գիւղերը և չը-
րեր կանանց, սանձուի, գլխաւոր, սիրահարու-
թեան, առեկտիւնան գրեւ անել իր զօրաւոր «Ար-
դարեան»-ով: Այժմ էլ մտել է Ստեփան վարդապե-
տի մօտ և ձրի քարտուղարութիւն է անում, և
միասին վայելում են վանքի առատ եկամուտը և
ամենաբոլոր հիւրավորում իրանց ծանօթներին:—
Վերջացնելով նամակս, հարցնում ենք, արդեօք այս
խաղաղութեամբ, խաղաղութեամբ դեռ շատ պէտք է
ծծեն տղուկի նման վանքի արհմը, աշխարհումս
մի լարելիքով վարդապետ չը կայ որ կառավարէ
այս վանքը, և հոգեւոր իշխանութիւնը չը պէտք է
ուշադրութիւն դարձնէ այս ցաւալի հանգամանքնե-
րի վրա:

Համապարտորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԻՄԱՆԻՑ մեզ գրում են. «Երբեք 6-ին
եկած անձրեկից գիւղի մօտ դառնում արուակը սա-
տիկ բարձրացաւ, քանդեց մի մարաք, մի քանի
արտեր փչացրեց, իսկ մի 12 տարեկան տղայի
հաղի կարողացան խեղդովելու աղատել: Այս տա-
րի արտերը այնպիսի առատ հունձ են խոտա-
նում, որ Համապարտորդ երբեք չէ տեսել:

Մեզ հաղորդում են ՍԵՒԱՆԻՑ, որ Նոր-Բայա-
ղետի ուխտաւորներին մէկը լողանալով Սեանայ
լճի մէջ խեղդովել է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Վերջին ժամանակներս Լոնդոնի պահպա-
նողական պատգամաւորներն մի խնջոյքում
լորդ Սելիբուրի արտաքին քաղաքականու-
թեան վերաբերեալ մի նշանաւոր ճառ խօ-
սեց:

Մենք աւելորդ ենք համարում մէջ բերել
այդ ճառի բոլոր մանրամասնութիւնները, և
բացի այդ մեր ժամանակն էլ մեզ թոյլ չէ
տալի այդ անելու, բայց և այնպէս մենք կը
խօսենք այդ ճառի մի քանի գլխաւոր կէտերի
մասին. ահա առաջին այդ կէտերը:

Լորդը խօսելով իրանց նախադասի յայտա-
նած այն մտքերի մասին, որով նա այնպիսի
մի առանձին մեծ նշանակութիւն է տալի
քաղաքական վերջին անցքերին, լորդը բոլոր
բովլին համաձայն է գործի այդ ծանր նշանա-
կութեան հետ, լորդը ասում է, որ այս վեր-
ջին տարիների քաղաքական ընթացքը այն
ծանր խնդիրների կարգին է, ուր ամբողջ
ազգի ուշադրութիւնը բացառապէս դրանով
է լարված: Այդպիսի կերպով ասած, Անգ-
լիան մրցել է ամենատարօրինակ դժուարու-
թիւնների հետ, նա ոչ միայն մրցել է ար-
տաքին դժուարութիւնների հետ, այլ և մի և
նոյն ժամանակ նա ստիպված է եղել մրցել
և այն ճշմարիտ դժուարութիւնների հետ,
որոնք յայնպիսի են իր սեփական ընտանիքում:
Հայրենիքում:

Բրիտանական դրօշակը սարսափ է ձգում
իր արտաքին թշնամիների վրա, բայց նա ան-
զօր է իր սեփական ոյժի դէմ: (Մտաւհա-
րութիւններ): Նա համեմատում է պահ-
պանողական կուսակցութեան ներկայ ընդդի-
մաբանութիւնը ամբերկական ձգնաժամի ներ-
քին երկպառակութիւնների հետ, և գտնում
է, որ այժմ էլ մի և նոյն ոգին էր տիրապե-
տում պահպանողական բանակի մէջ, որից
երբեքս այնպէս սարսափելի կերպով վերադա-
րձու անգլիական ազգային ինքնասիրական
զգացմունքը: (Ծափահարութիւններ):

Այժմ, չը նայելով պահպանողականների
աղետալի յայտարարութիւններին ու նախա-
դուշակութիւններին, բոլոր վտանգն ու սպառ-

նալիքներն անցել գնացել են: Մտաւորապէս
տասն և ութ ամիս կը լինի, որ պահպանողա-
կանները բղաւում էին թէ կառավարութիւնը
կամենում է հայրենիքին մի մահացու պա-
տերազմի ենթարկել:

Այժմ այդ ժամանակն անցաւ և այն կա-
ռավարութիւնը, որին այնքան ամբաստանու-
թիւններ ու յանդիմանութիւններ էին անում,
այժմ ամբողջ Ներքային իր ընդհանուր խա-
ղաղութիւնը այդ անհաշտ կարծիքի կա-
կառավարութեանն է պարտական:

Պահպանողականները կամենում էին հա-
ւատացնել, որ Բերլինի դաշնագիրը անիրա-
գործելի է, և որ նրա բոլոր յօդուածները
ծայրէջայր ոչ այլ ինչ են, բայց եթէ ոչ կա-
տարեալ ցնորք:

Սրանից յետոյ լորդը մի առանձին հա-
մետութեամբ, որի մէջ անամայ հպարտու-
թիւնը չէր կարողանում քօղարկվել, ասաց.

«Այս րօպէիս, երբ ևս ձեզ հետ խօսում
եմ, կարծեմ վտառ հ և համարձակ կարող եմ
ասել, որ Բերլինի դաշնագիրը իր շատ թէ
քիչ նշանակութիւն ունեցող մանրամասնու-
թիւններով արդէն իրագործված է:» (Աղմը-
կալի ծափահարութիւններ):

Այստեղ մենք աւելորդ չենք համարում
մի փոքրիկ նկատողութիւն անել.

Լորդերի ժողովում հայոց խնդրի մասին
ծաղած վիճաբանութիւնների ժամանակ, մենք
ամենքս լարված ուշադրութեամբ լսում էինք
լորդ Սելիբուրիի—Փիւրբիայի այդ հռչակաւոր
protecteur-ի ճառը, թէ արդեօք նա ինչ դա-
տակնիք կը կարդայ, և ինչ կերպով կը վճռի
մեր հայրենիքի բաղդը. խեղճ Հայաստան,
այդ օրին էլ պէտք է հասնէիր, որ մի որ և
է Սելիբուրիի քաղաքական կարծիքը կարո-
ղանար քեզ անդունդը գլորել, կամ ընդհա-
կառակը երկինք բարձրացնել:...

Սելիբուրիի լորդ Կարնարվոնին տուած
պատասխանական ճառը մենք այնպիսի անձ-
կութեամբ էինք լսում, ինչպէս մեղադրված
ների նստարանի վրայի մեղադարտը լսում է
իր բաղդի վճիռը:...

Լորդ Սելիբուրիի երկար ու բարակ շարա-
կաններ կարգաց մեր գլխին, որի մէջ նրա
ճարտար դիւլլոմատիական լեզուն այնպիսի
երազական ու փայլուն կօմպլիմենտներ էր
անում, որի նմանը Ելիսան դաշնաւոր ու
Բուլոնեան ամենահռչակաւոր դէպքն ունէին
անգամ չէր կարող անել իր սալօնական սի-
րուհուն:

Ել ինչեւ չը մնաց, որ պատուելի լորդը
չաւէր. գլխութիւն, ողորմութիւն, ընդհանուր
մարդասիրական ու ազատութեան ըսկզ-
բունքներ, և հայերի սրտին մխիթարական
հաղորդ ու մի հրապարակ խօսքեր:

Նա վերջացրեց իր ճառը, բայց գլուխ
մեռնի, թէ ևս դրանից բան հասկացայ, որով-
հետեւ, ինչպէս և միշտ այդ ճառը մնաց
դիւլլոմատիական անթափանցիկ վարագոյրի
ետեւի անյայտութեան մէջ: Զը նայելով, որ
այդ ճառի միտքը անհասկալի մնաց և շատ
ուրիշ հայերի համար, բայց ևս խորը կերպով
համոզված եմ, որ դուք հաղաւոր, այս-
պէս ասած, նշանաւոր և բանիմաց ազգային-
ներ, կը գտնէք, որոնք ինչեւեղական սիրով
կապված Սելիբուրիի հետ, (մանաւանդ նրա
վերջին ճառից յետոյ) կարծում են թէ
Հայաստանի ապագայ փառքը այդ դիւլլոմա-
տից է կախված:... Եւ մեծ մարդ չեմ, և չա-
փազանց համեստ եմ այսպիսի նշանաւոր
խնդիրների մէջ իմ սեփական կարծիքներս
յայտնելու, միայն ևս մի ճշմարտութիւն
եմ սովորել, որ եթէ ինձ թոյլ տային ևս
դրան հայոց աւետարանի կողքին կը գրէի:
Թոյլ կը տաք ինձ ասել այդ ճշմարտութիւ-
նը: Ահա առաջին. «ԱՅՆ ԱՅՈՐ, ՈՐ ԻՆՔՐ ԻՐ
ՎՐԱ ՅՈՅՈՐ ԶՈՒՆԻ, ՆԱ ԱՊԱՍԱՅ ԶՈՒՆԻ:»

Պատուելի ընթերցող, եկէք անկեղծաբար
խոստովանեցէք, որ դուք էլ ինձ հետ միա-
պին ոչինչ չը հասկացաք Սելիբուրիի ճառից,

դրա մասին ևս ձեզ չեմ մեղադրի, մի վախէք,
և վերջապէս մի՞թէ ևս իրաւունք ունեւմ ու-
րիշին մեղադրել այն յանցանքի մէջ, որին
մանակից եմ և ես: Եւ այսպէս ուրեմն լորդ
Սելիբուրիի հայերի մասին խօսած ճառը
մեզ համար բոլորովն մութ մնաց, այնպէս
որ մենք չը կարողացանք մի որոշ կերպիա-
ցութեան հասնել, թէ արդեօք նա բարի
է կամենում մեզ թէ չար. բայց, մեր
մէջ ասած, ևս երբեք չեմ հաւա-
տում այդ մարդկերանց, բայց երբ լս-
ում եմ թէ Վանի սանձակում քիւրդերը հայ
հօրը դաշտի մէջ անասկի տանջանքներով լս-
պանեցին, և նրա երիտասարդ որդու ամուս-
նուն էլ փախցրին, ևս այդ հաւատում եմ
և վրաս մի կատարել ուրախութիւն է դալի,
որովհետեւ հաստատ գիտեմ, որ հայը բնու-
թեան այն էակներից է, որին մինչև չը դա-
ղես նրա մէջ վրէժխնդրութեան ոգին չի դար-
թի:

Մենք ասացինք, որ լորդ Սելիբուրիի հա-
յերի մասին խօսած ճառի միտքը վարագոյրի
ետեւ մնաց. բայց ներկայ ճառով, որի մասին
մենք խօսեցինք մեր յօդուածի սկզբում, մենք
բաղդ ունեցանք նայել վարագոյրի մի կողմից,
որ անգղղուութեամբ այս անգամ բաց էր մը-
նացել, և տեսանք երեսը առանց դիմախի. ու-
րիշ խօսքով ասած մենք տեսանք այդ լորդին
իր կատարեալ դերի մէջ. նա մի և նոյն դի-
ւալման է, որ բրիտանական պաղարկունու-
թեամբ իր հաշիւներից մի կէտ անգամ չէ
շեղվում: Փիւրբիայի պաշտպանութիւնը ծա-
ռայում է բրիտանական շահերին, և Սելի-
բուրին մնում է հաւատարմը գաւալի իր հայ-
րենիքի շահերին և իր քաղաքական սկզբուն-
քներին: Յիշե՛ք լորդի ներկայ ճառի վերջին
խօսքերը որ նա ուղղում է պահպանողական
կուսակցութեանը նրանց վերջին խնջոյքում:

«... փտահ և համարձակ կարող եմ ա-
սել, որ Բերլինի դաշնագիրը իր շատ թէ քիչ
նշանակութիւն ունեցող մանրամասնութիւն-
ներով արդէն իրագործված է:»

Հասկանալի է այժմ, թէ այս խօսքերով
լորդը ինչ նշանակութիւն է տալի հայկական
խնդրին: Այս խօսքերից պարզ երևում է, որ
հայկական խնդիրը մինչև անգամ դաշնագրի
մանրամասնութիւնների մէջ էլ չէ մտնում, որով-
հետեւ որքան մեզ յայտնի է Բերլինի դաշնագրի
61-րորդ յօդուածի վերաբերութեամբ ամե-
նաչնչին կարգադրութիւն անգամ չէ կղած. և
վերջապէս ազգի ու պատրիարքի շարունակ
բողոքները վիայ են մեր ասածի ճշմարտու-
թեանը:

Եւ դեռ էլ կան իդիօտներ, որոնք յիմար
երեխայի պէս դարձեալ հաւատում են անգ-
լիական ցնորամիտ հովանաւորութեանը:

Եւ վերջացնում եմ իմ յօդուածը ասելով,
որ մեր յոյսը թող մեզ վրա լինի:

Մ. Մ.

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Դապէժ, 14 յունիսի

Շատ ժամանակ չը կայ որ ևս գրել էի, թէ
չուտով կը հիմնով մեր քաղաքում մի օրվորական
դպրոց, և արդար ևս օր օրից մօտենում է իր
կառուցմանը, կամ թէ պարզ ասեմ նա շուտով
կը բացվի հոգատարութեամբ այն ընկերութեանը,
որ բաղկացած է 30-ից աւելի անձնանքներից: (Ե-
կերութեան անդամներից խաբարանկեր պէտք է
վճարի տարին 3 թուան իրեն անդամական վը-
ճար, իսկ եթէ նոյն անդամը ազգիկ տայ դպրոցին,
պէտք է վճարի դարձեալ 3 թուան: Ով որ ան-
դամ չէ և կամենում է մի ազգիկ տալ դպրոցին,
նա վճարում է 4 թուան: Ընկերութիւնը պղ-
մուտքերով ապահովում է դպրոցի գոյութիւնը և
խոստանում է քաց անել և շարունակել: Որդի-
ները պէտք է տովորեն հայերէն լեզու միայն և
կար: Սորա ուրիշ մանրամասնութիւնները կը գրեմ
մի այլ անգամ:

Քաղաքի ազգային Արամեան դպրոցի հարցա-
քննութիւնների սկսված էին անցնել ամիս 21-ից

և վերջացան ներկայ ամիս 5-ին, բայց այդ 15
օրվայ քննութեան ժամանակ մեր հասարակութիւ-
նից 15 մարդիկ ներկայ չը գտնվեցան իրանց
որդոց արած յառաջադիւսութիւնը տեսնելու հա-
մար: Աւ. քեզ զարմանք, կարծես թէ մեր հայերի
աչքում մի բան, ինչ որ էլ լինի նա, հէնց ըսկզ-
բում միայն նշանակութիւն ունի, նա հնացաւ թէ
չէ, իր յարգն, էլ վարկն էլ կորաւ, ինչպէս որ
մեր դպրոցն է: Այն դպրոցը որ մի քանի տարի
սրանից առաջ բաւական խօսակցութեան առար-
կայ էր դարձել իր փալուն դարգացումով, այն
դպրոցը, որի նիւթականը ապահոված է աւելի
քան 15 հազար ռուբլիով և ուրիշ մի քանի կա-
լուածական եկամուտներով, այն դպրոցը որ ու-
սաց և պարսից կառավարութիւններից ստանում
է տարեկան 1000 ռուբլի, մի խօսքով այն դպ-
րոցը որ մեզ համար ամառ և կենաց խնդիր է
այս երրորդ տարին է որ իր հարցաքննութեան
հաշիւը տալիս և չորս պատերին, որովհետեւ հա-
սարակութիւնը դորան աչքից զցնելով էլ չէ համա-
կրում, անմատչելի է դարձել:—Ինչից է դա, կը
հարցանէք դուք,—ոչ ոք չէ կարող լուծել այդ
Գորդեան հանգուցը զօրպէս աղբիւր փակեալ և
դուռն կնքեալ:»

Գնանք երկու քալ մեր քաղաքից. դուրս, Լիւ-
վայի թաղը, որտեղ կայ մի չքաւոր դպրոց 80 ա-
շակերտներով: Ուր կը տեսնէք թէ այդ թաղիցի
իրանց համեստ քաւորութեամբ ինչպէս սիրում և
գգվում են իրանց դպրոցը և որպիսի գեղեցիկ
հարցաքննութեան հանդէս տուին այս տարի հան-
դերձ պարգեւաբաշխութեամբ: Յարգ և պատիւ պ.
Սան Տէր-Ջաքարեանին որ յիշեալ դպրոցի աւել է
իր խնամակալութեան տակ և թաղեցոց հետ քըրտ-
նաչան աշխատելով հոգս է տանում նոյն դպրոցի
վրա և նորից էլ չէ՛ք և կառուցանում:

Ես մինչև այժմ ոչինչ չեմ գրել մեր երկրի ե-
ղանակից: Ինտիմիւր որ կարծես թէ միշտ առատ
է եղել և շուայ դէպի Պարսկաստանը, այս ան-
ցեալ գարունից մինչև օրս մի կանանաւոր անձրն
չէ աւել, հացը և ցորենը բարձր գին ունեն: Զար-
մանալի երաշտութիւն է, ինչպէս ուրիշ
շատ տեղերում: Նոյնպէս էլ Արապատակա-
նում և բացի դրանից ամառվայ չորերը վե-
րին աստիճանի են և անտանելի, մինչև անգամ ծե-
րերը չեն մտաբերում իրանց կենսութեամբ մի այսպիսի
տաք և տօնային ամառ, մանաւանդ որ հա-
րուսային տաք քամին էլ անդալար փչում է: Զեր-
մաշափը բարձրանում է 35—36 աստիճան: Լսե-
ցինք որ Թէհրանի մօտ դաշտերում տաքութիւնը
շատ մարդիկ չնպասպաւ խեղդել է:

Արմենակ

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յուլիսի. Յուլիսի 24-ին
Բուշուկից հաղորդում են «Правит. Вѣстн.»
լրագրին հետեւեալը: Նրէկ Բօլաքիան բոլորու-
վին դատարկվեց զօրքերից: Բուշուկից և Սի-
լիստիայից հեռացան Բուզակի, Ուլանսկի և
Ուրալսկի կօզակների վերջին դնդերը: Այս
գնդերը այսօր Բէնից նաւ նստեցին, այնպէս
որ այժմ ոչ Բուշուկիւում և ոչ Բօլաքիայում
ոչ մի ռուսաց զինեալ զինուոր չէք գտնի:
Նրթեկեկութիւնների կառավարչի տեղապահ
գնեւալ Բագգիլդէկի կուղեւորվեւ ամիս 26-ին.
մինչև այդ ժամանակ նրա մօտ կը ժողովն,
բոլոր այն ռուս աստիճանաւորները, որոնք
արձակված են մեր երթեկեկութիւնների վար-
չութեան պաշտօնից. բացի այս մինչև այդ
ժամանակամիջոցը կը բեռնաւորեն բոլոր թա-
ղաւորական իրեղէնները: Բագգիլդէկի բոլոր
ռուսներին մինչև ամենապիւրջին հետեւոր
հայրենիք ուղարկելուց յետոյ, ինքն էլ յուլի-
սի 30-ին Օդեսա կը հասնի:

ՄԱԿԻՐԻ, 26 յուլիսի (7 օգոստոսի): Այն
կառ.քը, որով ճանապարհորդում էր Ալթոնս
թաղաւորը, Կսիւրիայի և Ալեւ-Իլլէֆօնսի
մէջ շուռ եկաւ: Թաղաւորը թիթե կերպով
ջնաւովից: Գնեւալ Կսիւրիայի վերաւորեցաւ:
Թաղաւորը և իր ինժանտը (թաղաւորի աղ-
ջիկը) հասան Ալեւ-Իլլէֆօնսո:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

